

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍԱՇՐՋԱՆԸ

Մարտի 3—4-ր տեղի ունեցավ ԳԱ լեզվի ինստիտուտի հաշվետու ղեկավարական նստաշրջանը՝ Գիտական նստաշրջանում ընթերցվեցին մի շարք զեկուցումներ, որոնք վերաբերում էին ինստիտուտի 1963 թ. կատարած գիտահետազոտական աշխատանքներին:

«Հայաստանի լեզուն» թեմայով զեկուցեց լեզվի ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. Գ. Ջահուկյանը: Զեկուցողը նշեց, որ քառասունից ավելի տեղանունների, անձնանունների և զերանունների բաղադրովանի ուսումնասիրության հիման վրա պարզել է հայասերների բառերի մեծամասնության շեղվորոպական ծագում ունենալը, կամ ավելի ձիշտ այդ բառերի սերտ աղբյուրներ խեթերենի հետ: Հետևաբար, ասաց պրոֆ. Գ. Ջահուկյանը, հայասերներ, ինչպես փաստերն են ասում, եղել է շեղվորոպական լեզու, պատկանել է անատոլիական խմբին: Այն, չլինելով հայերենի անմիջական նախորդը, հայերենի վրա թողել է ուժեղ ազդեցություն՝ հանդես գալով որպես յուրատեսակ ենթաշերտ (substrat):

Թուամայանի գեղարվեստական երկերի բառարանը՝ թեմայով զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Պետրոսյանը, որը հիմնավորեց հեղինակային բառարանի կարեւորությունը գրական լեզվի պատմության, տվյալ հեղինակի լեզվի բաղադրովանի ուսումնասիրության, ինչպես նաև ժամանակակից կառուցվածքային և կիրառական լեզվաբանության հատկապես մեքենական թարգմանության և բառերի դործունեության հաճախականությունը որոշելու համար:

«Հունարան զպրոցի ժամանակագրության հարցի շուրջը» թեմային էր նվիրված լեզվի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Ա. Մուրադյանի զեկուցումը: Նա հանդամանորեն կանգ առավ V և VI դարերի մեր մատենագիրների կատարած ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանչական շնորհակալ աշխատանքի բնութագրման վրա: Զեկուցողը նշեց, որ հունարան զպրոցի սկզբնավորումը կարելի է համարել V դարի առաջին կեսից, այդ շրջանի մատենագիրներին անվանելով ավագ թարգմանիչներ, իսկ հետագաներին՝ կրտսեր թարգմանիչներ:

«Մոտկանի ենթաբարբառի մի քանի բնորոշ առանձնահատկությունները» թեմայի մասին զեկուցեց կրտսեր գիտաշխատող Հ. Աղամյանը: Նա հայտնեց այն կարծիքը, որ Մոտկանի ենթաբարբառը ԿԸ ճյուղի, հատկապես Սասունի բարբառի, բարբառների շարքում մայր բարբառ է, թեև ունի ինչպես ձևաբանական, այնպես էլ հնչյունաբանական զգալի տարբերություն:

«Սվեդիո բարբառի ձևաբանական մի քանի կարևոր առանձնահատկությունները» թեմայի մասին զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի կրտսեր գիտաշխատակից Ալ. Փաշայանը, որը տվեց Սվեդիո, այսինքն՝ Մուսա-լեռան հայկական գյուղերի խոսվածքների տարբերակությունների ընդհանուր ուրվագիծը:

Բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Առաքելյանի զեկուցումը նվիրված էր «Պարբերույթը ժամանակակից հայերենում» թեմային: Զեկուցողը մանրամասն վերլուծելով պարբերույթի ժամանակակից հասկացությունը, ցույց տվեց այն բոլոր առանձնահատկությունները (ոճաբանական, հնչերակային, բերականական և այլն), որոնցով պարբերույթը տարբերվում է սովորական նախադասություններից: Հեղինակի ուսումնասիրությունը հետաքրքիր է նաև այն տեսակետից, որ հայերենի պարբերույթը մինչև այժմ չի ուսումնասիրված:

«Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» թեմայով զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Պառնասյանը: Զեկուցողը կանգ առավ ինչպիսի շարահյուսական կառուցվածքն ամբողջությամբ ուսումնասիրելու, այնպես էլ լեզվի արտահայտչական միջոցները վեր հանելու, ոճաբանական վերլուծությունը կատարելու բնագավառում շարահյուսական սահմանների դերի վրա: Որինականների հիման վրա բացահայտող շարահյուսական համանիշների առանձնահատկությունները:

«Հնչյունների տարբերիչ հատկանիշների հարցի շուրջը» թեմայով զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Արամյանը: Զեկուցողը խոսեց լեզվի հնչյունաբանական կազմի կառուցվածքային վերլուծության հարցի մասին, նշեց հնչյունների տարբերակիչ հատկանիշների բացահայտման անհրաժեշտությունը: Նա խոսեց նաև ժամանակակից հնչյունաբանության առանցքը կազմող տարբերակիչ հատկանիշների և դրանց երկակի հակադրությունների շուրջը:

ստեղծված մի շարք տեսակետների մասին: Հիմնականում քննադատորեն շարադրեց Ռ. Յա. կորստնի, Գ. Ֆանտի, Մ. Հալևի հայացքները վերոհիշյալ հարցերի մասին:

«Քեզարվեստական գրականության լեզվի հարցերը ըստ հայ գրողների» թեմայի մասին գեկուցեց րանասիրական գիտությունների թեկնածու Դ. Վահանյանը: Նա բացահայտեց, որ տեսության մի շարք հարցեր, լուսարանեց գեզարվեստական երկի լեզուն ուսումնասիրելու այն շրջանակներն ու նպատակագրումները, որոնցով շահագրգռված են լեզվաբանները:

Ա. ՓԼՇԱՅԱՆ,